Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆԻ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սարգիս Հայոցյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Հունաստանի Հանրապետություն, ք. Պատրաս, 10-12 ապրիլի, 2022 թվական

4. Հրավիրող կողմը

Պատրասի համալսարան

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Հայ-Ռուսական համալսարանի և Պատրասի համալսարանի միջև «Հորիզոն 2020» հետազոտությունների և նորարարությունների ԵՄ ծրագրի շրջանակում իրականացվող «Nano-QIQO» թվինինգ նախագծին նվիրված աշխատաժողովին և նախագծի խորհրդատվական մարմնի հանդիպմանը մասնակցելու համար:

6. Քննարկված թեմաները

1) «Nano-QIQO» թվինինգ նախագծի շրջանակում գրանցված հաջողությունները, նանոտեխնոլոգիաների ոլորտի նոր մարտահրավերները, ծրագրի շրջանակներում համագործակցության շարունակականության ապահովմանն ու ընդլայնմանն առնչվող հարցեր,

2) «Հորիզոն Եվրոպա» ԵՄ հետազոտությունների և նորարարությունների նոր ծրագրի շրջանակում «Nano-QIQO» թվինինգ նախագիծը շարունակելու հեռանկարները, ինչպես նաև նախագծում ընդգրկված համալսարանների հետ համագործակցային նոր ծրագրեր իրականացնելու մասին հարցեր,

3) Գիտության ոլորտում հայ-հունական երկկողմ համագործակցությունը խթանելու և համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորության հարցը,

4) Նանոտեխնոլոգիաների ոլորտում համատեղ ասպիրանտական ծրագրեր իրականացնելու կարգի և պայմանների, ինչպես նաև ծրագրի ներդրման ժամկետների հետ կապված հարցեր:

7. *Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը*

Գործուղման ընթացքում Ս. Հայոցյանը հանդիպել է Պատրասի համալսարանի ղեկավարության և «Nano-QIQO» նախագծի կոնսորցիումի ներկայացուցիչների հետ: Քննարկվել են նախագծի ընթացքը, ծրագրի շրջանակում գրանցված հաջողությունները, նանոտեխնոլոգիաների ոլորտի նոր մարտահրավերները, ծրագրի շրջանակներում համագործակցության շարունակականության և ընդլայնման հարցերը: Պատրասի համալսարանի ղեկավարության հետ քննարկվել են նաև գիտության ոլորտում հայ-հունական երկկողմ համագործակցության զարգացմանն ու համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությանը նվիրված հարցեր:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ստորագրվել է Պատրասի համալսարանի և Հայ-Ռուսական համալսարան միջև փոխըմբռնման հուշագիրը և «Համատեղ ասպիրանտական ծրագրերի ներդրման մասին» համաձայնագիրը, որը հնարավորություն կտա կոնսորցիումի անդամ երկրներում ներդնել նանոտեխնոլոգիաների ոլորտում համատեղ ասպիրանտական ծրագրեր:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համագործակցելու Պատրասի համալսարանի գիտության թանգարանի աշխատակիցների հետ և Հայաստանի Հանրապետությունում նմանատիպ կառույց հիմնադրվելու պարագայում աջակցություն ստանալու վերաբերյալ:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նաև «Nano-QIQO» նախագծի հետագա ընթացքն ապահովելու և ԵՄ «Հորիզոն Եվրոպա» շրջանակային ծրագրի շրջանակներում նանոտեխնոլոգիաների և նյութագիտության գերազանցության կենտրոն հիմնադրելու նախագիծ ներկայացնելու վերաբերյալ, ինչպես նաև

Եվրոպական հետազոտական տարածքի ամբիոնի (ERA Chair) ծրագրով Պատրասի համալսարանի գիտնականների խմբին Հայաստանի Հանրապետությունում ընդունելու համար:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Կողմերը պայմանավորվել են շարունակել աշխատանքները ծրագրի ներդրման ուղղությամբ՝ «Nano-QIQO» ծրագրի ընձեռած հնարավորությունների շրջանակներում:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

Recoverable Signature

X

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՈՑՅԱՆ

Signed by: HAYOTSYAN SARGIS 3611840777

Սարգիս Հայոցյան

14.04.2022թ.